Երկրորդ ընթերցում

Պ-446-29.11.2022,13.01.2023-ԳԿ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՄԱՍԻՆ»
ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի մասին» 2001 թվականի հունիսի 26-ի ՀՕ-196 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 2-րդ հոդվածի ժե) կետը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.

1. «**ժե) Դոպինգ՝** Համաշխարհային հակադոպինգային օրենսգրքով սահմանված հակադոպինգային կանոնների մեկ կամ մի քանի խախտումներ.»

2. Օրենքի 2-րդ հոդվածի ժզ) կետը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.

«**ժզ) Հակադոպինգային գործունեություն՝** հակադոպինգային կրթություն և տեղեկատվություն, մարզիկների մրցումային և արտամրցումային դոպինգ ստուգում, սպորտում արգելված նյութերի և մեթոդների օգտագործման կանխարգելում և հակադոպինգային կանոնակարգերի մշակում և այլ գործունեություն՝ ինչպես սահմանված է Համաշխարհային հակադոպինգային օրենսգրքում և միջազգային չափորոշիչներում.».

3. Օրենքի 2-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր ժթ) կետով.

«**ժթ) Հայաստանում Ազգային հակադոպինգային կազմակերպություն՝** կառավարության կողմից ստեղծված կազմակերպություն Հայաստանի Հանրապետությունում հակադոպինգային գործունեություն իրականացնելու համար»

Հոդված 2. Օրենքի 9-րդ հոդվածի ժ7) կետը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.

«ժ7) ապահովում է Հայաստանում Ազգային հակադոպինգային կազմակերպության մասնագիտական անկախությունը և նպաստում դրա համապատասխանությանը Սպորտում դոպինգի դեմ Միավորված ազգերի կրթության, գիտության և մշակույթի կազմակերպության կողմից հաստատված միջազգային կոնվենցիային, Համաշխարհային հակադոպինգային օրենսգրքին և միջազգային չափորոշիչներին:

Հոդված 3. Օրենքի 12-րդ հոդվածի վերջին պարբերությունը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետեւյալ բովանդակությամբ.

«ՀԱՕԿ-ը, Համաշխարհային հակադոպինգային օրենսգրքին համաձայն, աջակցություն է ցուցաբերում Հայաստանում Ազգային հակադոպինգային կազմակերպությանը դոպինգի կանխարգելմանը սպորտում և դրա դեմ պայքարին, ինչպես նաև պատասխանատու է խտրականության և բռնության ցանկացած ձևի արտահայտման հակազդեցության համար սպորտում՝ օլիմպիական խարտիայի և միջազգային չափորոշիչներին համապատասխան:»

Հոդված 4. Օրենքի 13-րդ հոդվածի գ) կետը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.

«աջակցություն են ցուցաբերում Հայաստանում Ազգային հակադոպինգային կազմակերպությանն իրականացնելու իր՝ Համաշխարհային հակադոպինգային օրենսգրքով և միջազգային չափորոշիչներով ստանձնած բոլոր պարտավորությունները»:

Հոդված 5. Օրենքի 18.6-րդ հոդվածի 1-ին մասի դ) կետը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.

1. «դ) հիվանդությունների, վնասվածքների դեպքում ստանալ բժշկական օգնություն և սպասարկում բժշկական կազմակերպություններում, դիսպանսերային (շարունակական) հսկողության ծառայություն իրականացնող հաստատություններում՝ հնարավորության դեպքում մշտապես տեղեկացնելով բժշկական անձնակազմին արգելված նյութեր և արգելված մեթոդներ չօգտագործելու իրենց պարտավորության մասին, իսկ պարտադիր բուժում նշանակվելու դեպքում օգտվել Թերապևտիկ օգտագործման բացառության թույլտվություն ստանալու Համաշխարհային հակադոպինգային օրենսգրքով սահմանված իր իրավունքից.»
2. Օրենքի 18.6 հոդվածի 2-րդ մասի ե) կետը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.

«ե) տեղեկացված լինել և հետևել արգելված նյութերի և մեթոդների օգտագործման պահանջներին և հակադոպինգային կանոններին, որոնք ընդունվել են Համաշխարհային հակադոպինգային օրենսգրքի համաձայն.»

Հոդված 6. Օրենքի 18.7-րդ հոդվածի 1-ին պարբերությունից հետո լրացնել նոր պարբերություն՝ հետևյալ բովանդակությամբ.

«Հավաքական թիմի մարզիչներն ու մասնագետները պարտավոր են հետևել հակադոպինգային կանոններին, որոնք ընդունվել են Համաշխարհային հակադոպինգային օրենսգրքի համաձայն:»

Հոդված 7. Օրենքի 18.9-րդ հոդվածի 1-ին պարբերությունից հետո լրացնել նոր պարբերություն՝ հետևյալ բովանդակությամբ.

«Հավաքականի թիմի բժիշկները պարտավոր են հետևել հակադոպինգային կանոններին, որոնք ընդունվել են Համաշխարհային հակադոպինգային օրենսգրքի համաձայն:»:

Հոդված 8. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Տեղեկանք նախագծում փոփոխվող հոդվածների վերաբերյալ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՄԱՍԻՆ»
ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի մասին» 2001 թվականի հունիսի 26-ի ՀՕ-196 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 2-րդ հոդվածի ժե) կետը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.

1. «**ժե) Դոպինգ՝** Համաշխարհային հակադոպինգային օրենսգրքով սահմանված հակադոպինգային կանոնների մեկ կամ մի քանի խախտումներ.»

2. Օրենքի 2-րդ հոդվածի ժզ) կետը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.

~~«**ժզ) Հակադոպինգային գործունեություն՝** հակադոպինգային կրթություն և տեղեկատվություն, ՀՀ մարզիկների մրցումային և արտամրցումային դոպինգ ստուգում, սպորտում արգելված նյութերի և մեթոդների օգտագործման կանխարգելում և հակադոպինգային կանոնակարգերի մշակում, ինչպես սահմանված է Համաշխարհային հակադոպինգային օրենսգրքում և միջազգային չափորոշիչներում.».~~

«ժզ) Հակադոպինգային գործունեություն՝ հակադոպինգային կրթություն և տեղեկատվություն, մարզիկների մրցումային և արտամրցումային դոպինգ ստուգում, սպորտում արգելված նյութերի և մեթոդների օգտագործման կանխարգելում և հակադոպինգային կանոնակարգերի մշակում և այլ գործունեություն՝ ինչպես սահմանված է Համաշխարհային հակադոպինգային օրենսգրքում և միջազգային չափորոշիչներում.».

Հոդված 3. Օրենքի 12-րդ հոդվածի վերջին պարբերությունը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետեւյալ բովանդակությամբ.

~~«ՀԱՕԿ-ը պատասխանատու է Հայաստանում Ազգային հակադոպինգային կազմակերպությանն օժանդակելու, հակադոպինգային գործընթացներ նախաձեռնելու և իրականացնելու, ինչպես նաև աջակցություն ցուցաբերելու խտրականության և բռնության ցանկացած ձևի արտահայտման հակազդեցությանը սպորտում՝ իր բոլոր պարտավորություններին, Համաշխարհային հակադոպինգային օրենսգրքին և միջազգային չափորոշիչներին համապատասխան:»~~

«ՀԱՕԿ-ը, Համաշխարհային հակադոպինգային օրենսգրքին համաձայն, աջակցություն է ցուցաբերում Հայաստանում Ազգային հակադոպինգային կազմակերպությանը դոպինգի կանխարգելմանը սպորտում և դրա դեմ պայքարին, ինչպես նաև պատասխանատու է խտրականության և բռնության ցանկացած ձևի արտահայտման հակազդեցության

համար սպորտում՝ օլիմպիական խարտիայի և միջազգային չափորոշիչներին համապատասխան:»

Հոդված 8. ~~Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող 30-րդ օրը:~~

Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

«ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Պ-446-29.11.2022,13.01.2023-ԳԿ-011/1) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

N	Առաջարկության հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերվում է առաջարկությունը	Առաջարկությունը (փոփոխությունը, լրացումը)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկությունն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1.	ՀՀ կառավարություն	«Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին (Պ-446-29.11.2022,13.01.2023-ԳԿ-011/1) Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի 1-ին հոդված	Առաջարկվում է ժե) կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «ժե) **Դոպինգի օգտագործում՝** Համաշխարհային հակադոպինգային օրենսգրքով սահմանված հակադոպինգային կանոնների մեկ կամ մի քանի խախտումների դեպքեր»:	Չի ընդունվել, քանի որ Համաշխարհային հակադոպինգային օրենսգրքով հստակ ամրագրված է՝ «Դոպինգը սահմանվում է որպես հակադոպինգային կանոնների մեկ կամ մի քանի կանոնների խախտումներ»: Իսկ օգտագործել դոպինգ նշանակում է խախտել հակադոպինգային օրենսգրքով սահմանված հակադոպինգային կանոններից մեկը կամ մի քանիսը, բայց ոչ նախատեսված բոլոր կանոնները: (Օր. Նմուշառումից խուսափելը, հրաժարվելը կամ նմուշառման վայր չներկայանալը դա դոպինգ կանոնների խախտում է, բայց ոչ	Չի ընդունվել

				երբեք դոպինգի օգտագործում)	
2.	ՀՀ կառավարություն	Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին (Պ-446-29.11.2022,13.01.2023-ԳԿ-011/1) Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի 5-րդ, 6-րդ, 7-րդ հոդվածներ	Առաջարկվում է խմբագրել՝ հստակեցնելով, թե արդյոք սահմանված պահանջները չպահպանելը (պարտավորությունները չկատարելը) առաջացնելու է որոշակի իրավական հետևանքներ՝ հաշվի առնելով իրավական որոշակիության սկզբունքը:	Չի ընդունվել, քանի որ պահանջները և վրա հասնող հետևանքները սահմանված են Համաշխարհային հակադոպինգային օրենսգրքով և որպես այդպիսին վարչարարությունը իրականացվում է Համաշխարհային հակադոպինգային կազմակերպության կողմից՝ բոլոր երկրներում ներդրված միասնական համակարգի միջոցով՝ իր կողմից վերապատրաստված և արտոնագիր ունեցող դոպինգ սպաների միջոցով: Իրավական որոշակիության սկզբունքը ամեն դեպքում պահվում է, քանի որ օրենսգրքում հստակ սահմանվում է յուրաքանչյուր խախտման հետևանքով վրա հասնող պատիժը, որի մասին էլ նշում է կատարվում կարգապահական հանձնաժողովի որոշմամբ՝ դոպինգ խախտման դեպքը քննելիս:	Չի ընդունվել

3.	Ազգային ժողովի պատգամավոր Սիսակ Գաբրիելյան	Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին (Պ-446-29.11.2022,13.01.2023-ԳԿ-011/1) Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի 1-ին հոդված	Առաջարկվում է ժզ) կետը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ . «**ժզ) Հակադոպինգային գործունեություն՝** հակադոպինգային կրթություն և տեղեկատվություն, մարզիկների մրցումային և արտամրցումային դոպինգ ստուգում, սպորտում արգելված նյութերի և մեթոդների օգտագործման կանխարգելում և հակադոպինգային կանոնակարգերի մշակում և այլ գործունեություն՝ ինչպես սահմանված է Համաշխարհային հակադոպինգային օրենսգրքում և միջազգային չափորոշիչներում.».	Ընդունվել է	Ընդունվել է
4.	Ազգային ժողովի պատգամավոր Սիսակ Գաբրիելյան	Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին (Պ-446-29.11.2022,13.01.2023-ԳԿ-011/1) Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի 3-րդ հոդված	Առաջարկվում է խմբագրել հետևյալ բովանդակությամբ. «ՀԱՕԿ-ը, Համաշխարհային հակադոպինգային օրենսգրքին համաձայն, աջակցություն է ցուցաբերում Հայաստանում Ազգային հակադոպինգային կազմակերպությանը դոպինգի կանխարգելմանը սպորտում և դրա դեմ պայքարին, ինչպես նաև պատասխանատու է խտրականության և բռնության ցանկացած ձևի արտահայտման հակազդեցության համար սպորտում՝ օլիմպիական խարտիայի և միջազգային չափորոշիչներին համապատասխան:»	Ընդունվել է	Ընդունվել է
5.	Ազգային ժողովի պատգամավոր Սիսակ Գաբրիելյան	Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին (Պ-446-	Առաջարկվում է խմբագրել հետևյալ բովանդակությամբ. «Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:»	Ընդունվել է	Ընդունվել է

		29.11.2022,13.01.2023-ԳԿ-011/1) Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի 8-րդ հոդված			